ՍՈՒՍԱՆՆԱ ԳՈՒՐԳԵՆԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան
գրականության ինստիտուտի առաջատար գիտաշխատող
susannahovhannisyan@litinst.sci.am
ORCID ID: 0000-0001-8718-6079
DOI: 10.54503/978-5-8080-1557-9-105

ԳՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ԴՊՐՈՑՆԵՐԸ XIX ԴԱՐԱՎԵՐՋԻ ԵՎ XX ԴԱՐԱՍԿԶԲԻ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Բանալի բառեր՝ *գրական դպրոցներ, ռոմանտիզմ, իդեալիզմ, ռեալիզմ, «Մասիս», «Հայրենիք», «Հորիզոն», «Գեղարվեստ» պարբերականներ, Ա. Չոպանյան, Գ. Լևոնյան:*

Ներածություն

Մամուլի դերը առհասարակ մեծ է ազգային ինքնության, մշակույթի պահպանման գործում: Մամուլը զենք է և հսկայական դեր է խաղում ցանկացած խնդրի լուսաբանման ու հանրահռչակման գործում: Նրա դերն առավել կարևորվում է պետականությունից զուրկ ազգերի համար: Երբ չկան պետական ինստիտուտներ, որոնցից յուրաքանչյուրը իր գործառույթն իրականացնի, երբ չկան ազգային ակադեմիա, գրական, գիտական կյանքը կարգավորող հաստատություններ, մամուլն է ստանձնում այդ դերը: Այս իմաստով վիթխարի է հայ պարբերական մամուլի նշանակությունը ինչպես հայ քաղաքական ու փիլիսոփայական, այնպես էլ գեղագիտական ու քննադատական մտքի զարգացման գործում: Գեղարվեստական գրականությունը նույնպես իր տարածումն էր գտնում մամուլի միջոցով: Մեզանում Հայ մամուլի պատմությունը բավական ուսումնասիրված ոլորտ է: Արժեքավոր են հատկապես Գ. Լևոնյանի, Ա. Խառատյանի, Մ. Հովսեփյանի, Ա. Կարինյանի, Է. Կոստանդյանի, Հ. Օշականի և այլոց ուսումնասիրությունն-

ները[1]: Նրանց աշխատությունները պատկերացում են տալիս մեր ժողովրդի համար էական ու վճռորոշ իրադարձությունների նկատմամբ այս կամ այն պարբերականի դրսևորած կեցվածքի և դիրքորոշման մասին: Դրանցում, սակայն, գրական խնդիրներին անհամեմատ քիչ է անդրադարձ կատարվել: Շատ ավելի հրապարակախոսության վերլուծության ենք հանդիպում[2], քան գրական խնդիրների քննաբանության: Իհարկե, որոշ գրականագետների հետազոտություններում կարելի է հանդիպել գրական, այդ թվում նաև գրականության տեսության որոշ խնդիրների լուսաբանում[3]: Այնուամենայնիվ, դրանք մեծ թիվ չեն կազմում, և հետազոտողներն էլ իրենց առջև խնդիր չեն դրել անդրադառնալու գրական ուղղությունների մասին հանդեսներում և օրաթերթերում տեղ գտած քննարկումներին ու բանավեճերին: Այս հանգամանքը առավել արդիական է դարձնում սույն հոդվածի ուսումնասիրության

---

[1] Տե՛ս **Լևոնյան Գ.,** Հայոց պարբերական մամուլը, Եր., Մելքոնեան Ֆոնդ հրատ., 1934, 268 էջ; **Խառատյան Ա.,** Օսմանյան գրաքննությունը և արևմտահայ մամուլը, 1858–1896, Եր., ՀԽՍՀ ԳԱ հրատ.1984, 92 էջ; **Խառատյան Ա.,** Արևմտահայ մամուլը և գրաքննությունը Օսմանյան Թուրքիայում, Եր., ՀԽՍՀ ԳԱ. հրատ., 1989, 381 էջ; **Խառատյան Ա.,** Հասարակական միտքը Զմյուռնիայի հայ պարբերական մամուլում (1840–1900), Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 1995, 382 էջ; **Խառատյան Ա.,** Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900–1922 թթ.), Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 2015, 534 էջ; **Խառատյան Ա.,** Արևմտահայ հասարակական մտքի և հրապարակախոսության պատմությունից, Եր., ՀՀ ԳԱԱ հրատ., 1980, 92 էջ; **Հովսեփյան Մ.,** Արևմտահայ մամուլի պատմություն (1832–1915 թթ.): Դասախոսություններ, Եր., ԵՊՀ հրատ., 2014, 84 էջ; «Հայ պարբերական մամուլի պատմություն, 1900–1922» (հեղինակներ՝ **Ա. Խառատյան, Լ. Գևորգյան, Մ. Հովսեփյան** և այլք), հ. 2, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2017, 786 էջ; **Կարինյան Ա.,** Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության, հ. 1, Եր., ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1956, 499 էջ; **Կոստանդյան Է.,** Կոնտանդնուպոլսի «Արևելք» պարբերականը, Եր., ՀՀ ԳԱԱ ՊԻ, 2003, 77 էջ; **Հակոբյան Ա.,** ՀՀ պարբերական մամուլի պատմություն (1918–1920), Եր., Հեղինակային հրատ. 2005, 63 էջ; **Օշական Հ.,** Գրաքննությունը և արևմտահայ մամուլը (կազմ.՝ Ա. Խառատյան), Եր., 1984, 92 էջ:

[2] Տե՛ս **Մարտիրոսյան Ն.,** «Հայրենիք» ամսագրի հրապարակախոսությունը (1920–1930-ական թթ.), Եր., ԵՊՀ. հրատ., 2001, 56 էջ:

[3] Տե՛ս **Խաչիկյան Գ.,** Ա. Արփիարյանը քննադատական ռեալիզմի տեսաբան, «Լրաբեր հասարակական գիտությունների», Եր., 1988, № 8, էջ 33–43, **Սարինյան Ս.,** Գրական դիտողություններ, Եր., Հայպետհրատ, 1964, 296 էջ; **Սարինյան Ս.,** Հայ գաղափարաբանություն, Եր., «Զանգակ-97» հրատ., 1998, 318 էջ; **Ստեփանյան Գ.,** Ա. Արփիարյանի գրականագիտական հայացքները, «Տեղեկագիր ԳԱ», Եր., 1948, № 12; Հայկական ռեալիզմի տեսության և պատմության հարցեր, Հոդվածների ժողովածու /Խմբ.՝ Էդ. Ջրբաշյան, Ս. Սարինյան, Զ. Ավետիսյան/, Եր., ՀՍՍՀ ԳԱ հրատ, 1987, 340 էջ:

առարկան՝ գրական դպրոցների քննությունը հայ պարբերական մամուլի էջերում:

Սույն հոդվածի *նպատակն է* առաջին անգամ համակարգել և գնահատել XIX դ. 90-ական թթ. XX դ. առաջին երկու տասնամյակներում հայ պարբերական մամուլում գրական դպրոցների վերլուծությամբ առանձնացող միջգիտակարգային բնույթի այն ուսումնասիրություն-հոդվածները, որոնք միաժամանակ վերաբերում են գրականագիտության տարբեր ճյուղերին՝ գրականության պատմությանը, գրականության տեսությանը և գրական քննադատությանը: Այդ նպատակի իրականացման համար դրվում են հետևյալ խնդիրները՝ համակարգել «Մասիս», «Հայրենիք», «Գեղարվեստ», «Հորիզոն» և արևմտահայ ու արևելահայ այլ պարբերականներում գրական ուղղությունների մասին հոդվածները, բացահայտել դրանց հեղինակների՝ Ա. Չոպանյանի, Ա. Արփիարյան, Գ. Լևոնյանի, Ե. Օտյանի և ժամանակի այլ հայ գրողների ու քննադատների տեսական մոտեցումների առանձնահատկություններն ու ընդհանրությունները: Աշխատանքի նորույթը պայմանավորված է նրանով, որ թեև հայ պարբերականներում գրական մեթոդների և ուղղությունների արծարծումներին որոշ անդրադարձներ եղել են, սակայն բացի ռեալիզմից՝ գրական դպրոցների ու մեթոդների հարցի՝ ժամանակին ծավալված քննարկումներն ու բանավեճերը առայսօր առանձին քննության առարկա չեն դարձել: Ուսումնասիրությունը կատարվել է ավանդական պատմահամեմատական և պատմական մեթոդների կիրառմամբ: Գրական ուղղությունների մասին տարաբնույթ հոդվածներում, անկախ այս կամ այն մեթոդի նկատմամբ մոտեցումներից, հայ քննադատներից շատերը թեև իր նշանակությամբ առանձնացրել և կարևորել են ռեալիզմը, սակայն հիմնականում առավելություն չեն տվել որևէ գրական ուղղության: Մոդեռնիստական որոշ ուղղությունների քննադատությանն ու մերժմանը զուգահեռ առաջադրվել են նաև բոլոր մեթոդները համադրելու տեսակետներ: Փորձեր են արվել բացահայտել գրական դպրոցների առաջացման գրապատմական ու փիլիսոփայական հիմքերը: 1890-ականներից մինչև 1920 թ. հայ քննադատների, հատկապես Ա. Չոպանյանի, Ա. Արփիարյանի և Գ. Լևոնյանի՝ մամուլում տպագրված հոդվածների միջոցով դրվեցին հիմքերը գեղարվեստական սկզբունքների ու միջոցների՝ պատմականորեն զարգացող համակարգի:

Հիմնական մաս

Գրական դպրոցների մասին քննադատական վերլուծություններ-ի հայ մամուլում հանդիպում ենք դեռևս XIX դարի 90-ականների սկզբին: Այս առումով առաջատար էին «Հայրենիք» և «Մասիս» ազգա-յին, գրական և քաղաքական պարբերականները: Առաջինը Ա. Չոպան-յանն էր, որ իր «Մեր գրականությունը» ծրագրային հոդվածում առա-ջադրեց գրական մեթոդները չգերագնահատելու դրույթը: Նա չէր խրախուսում «գրագիտական կանոններու վրա չափուած ձեւուած»[4] գրական երկերի ստեղծումը և գրական ուղղությունների մեջ տեսնում էր որոշ արհեստականություն: Այնուամենայնիվ, 1890-ականների սկզբին թե՛ Չոպանյանը, թե՛ 80-ականների գրական սերունդը գրա-կան մեթոդներից կարևորում էին ռեալիզմը: «Մեր ժողովրդին ամենէն աւելի կը յարմարի բնապաշտ դպրոցն, որովհետև ժողովուրդին ծոցէն կը առնե իր նիւթն ու կեանքը»[5],– գրում է Չոպանյանը: Նա, սակայն, ամենևին էլ այն կարծիքին չէ, թե գեղարվեստական մյուս մեթոդները, մասնավորապես ռոմատիզմը գոյության իրավունք չունեն:

1890-ականներին գրական դպրոց, ուղղություն և մեթոդ եզրույթ-ների ընկալումը հայ գրական շրջաններում դեռևս հստակ չէր: 1892 թ. «Հայրենիք» օրաթերթը տպագրում է «Գրական դպրոցներ» վերնագ-րով առաջնորդող, որի հեղինակն էր նույն լրագրի խմբագրապետ Ա. Արփիարյանը: Նա «գրական դպրոցներ» եզրույթի տակ միմյանցից առանձնացնում է քնարական և էպիկական սեռերը, որոնց բնորոշում է «գրական ընդհանուր օրէնք»: Արփիարյանը գործածում է «եսասիրա-կան դպրոց» և «մարդասիրական դպրոց» եզրույթները: «Եսասիրա-կան դպրոցին պատկանողները,– գրում է նա,– իրենք իրենց համար կը գրեն», իսկ «Մարդասիրական դպրոցին պատկանողները ... միայն կը մտածեն իրենց շուրջը գտնուողների վիճակին վրայ»[6]: Այս կամ այն դպրոցին պատկանելը Արփիարյանը պայմանավորում է գրողի անհա-տականությամբ, նրա բնավորության առանձնահատկություններով: Այնուամենայնիվ, նա հստակ սահման չէր դնում սեռերի միջև և նրանց

---

[4] **Չոպանյան Ա.,** Մեր գրականութիւնը, «Մասիս», Կ. Պոլիս, 1892, № 3959, մարտի 10, էջ 69:

[5] Նույն տեղում:

[6] **Արփիարյան Ա.,** Գրական դպրոցներ, «Հայրենիք», Կ. Պոլիս, 1892, հուլիսի 12, № 177:

մեջ տեսնում է փոխներթափանցումներ: Տեսական մյուս խնդիրը, որին «Հայրենիքում» անդրադարձավ Արփիարյանը, գրական մեթոդներն ու հոսանքներն էին: «Իրապաշտություն» հոդվածում նա առանձնացնում է երկու դպրոցներ՝ ռոմանտիզմը (մտատիպարական) և ռեալիզմը (իրապաշտական): Որպես ռոմանտիզմի բնորոշ հատկանիշներ նշում է երևակայականի դերը, իդեալների գերիշխանությունը, երջանիկ ավարտը. «Բարին կը յաղթէ չարին, առաքինութիւնը պարզերես կ'ելլէ, մոլութիւնը կը խայտառակուի»[7]: Իրապաշտ դպրոցի գրողներին առաջնորդող սկզբունքը, ըստ Արփիարյանի, հավատարմությունն է կյանքին՝ «Բարին բարի, չարը՝ չար, ճշմարտութիւնը իր բոլոր մերկութեան մէջ...»[8] ներկայացնելը: «Հայրենիքում» է տպագրվում նաև **Գ.Հ. Ֆնտգլյանի «**Իրապաշտություն և ճշմարտություն» հոդվածը[9]: Հեղինակը բանավիճում էր խմբագրապետի հետ: Նա դեմ էր ռոմանտիզմն ու ռեալիզմը միմյանց հակադրելուն: Այս դրույթը իր պաշտպանությունն է գտնում «Մասիսում»: 1893 թ. բանավեճին միանում է **Տիրան Քելեկյանը**: Նա «Իտէականը եւ իրականը» հոդվածում[10] առաջարկում է դրականը տեսնել թե՛ ռեալիզմի, թե՛ ռոմանտիզմի մեջ: Բարձր է գնահատում Հյուգոյի, Ա. Դյումայի, Էժեն Սյուի երկերում ստեղծված «գաղափարի աշխարհի մաքուր մթնոլորտը», «կյանքի աղտոտութիւնների», ռամիկի հայհոյանքի ու «փողոցի մարդերու սիրային քաջագործութիւններու» բացակայությունը[11]: Այնուհետ **Երվանդ Օտյանն է** միանում գրական մեթոդների հարցի քննարկմանը: Նրա «Բնապաշտ դպրոցին վրայ»[12] հոդվածը աչքի էր ընկնում ռեալիզմի մասին առավել խոր վերլուծությամբ և ընդգրկունությամբ, առավել բազմակողմանի հարցադրումներով և մոտեցումներով: Օտյանը մերժում է բոլոր նրանց, ովքեր «հաշտ աչքով չեն նայել» ռեալիզմին, այսինքն՝ բնապաշտությանը, ովքեր «կանխակալ կարծիքներու կը ծառայեն՝ անբարոյական, լկտի,

---

[7] **Արփիարյան Ա.,** Իրապաշտություն, «Հայրենք», 1892, հուլիսի 15, № 193:
[8] Նույն տեղում:
[9] **Ֆնտգլյան Գ.,** Իրապաշտություն և ճշմարտություն, «Հայրենիք», 1892, օգոստոսի 6, № 202:
[10] **Քելեկյան Տ.,** Իդեական ու իրականը (Գրական ուղղությունների շուրջ), «Մասիս», 1893, № 4002, հուլիսի 31, էջ 1:
[11] Նույն տեղում:
[12] **Օտյան Ե.,** Ակնարկ մը բնապաշտ դպրոցին վրա, «Մասիս», 1893, № 4003, օգոստոսի 7, էջ 483–485:

անիմաստ հռչակելով այս ուղղութիւնը»[13]: Առանձնահատուկ դեր է հատկացնում Ֆլոբերին, նրա «հզօր գրչին». «... Մատամ Պովառի ... այսօր ֆրանսէրէն ամէնէ լավ գրուած գիրքերէն մին է»[14]: Իր եզրակացության մեջ Օտյանը բնապաշտ դպրոցի հաղթանակը բնորոշում է «Գրական նոր դարագլուխ»[15]:

Ռոմանտիզմի նահանջով պայմանավորված՝ Ա. Չոպանյանը վերստին անդրադառնում է գրական դպրոցների խնդրին: 1894-ին «Գթություն» հոդվածում ռոմանտիզմի առաջացման հիմքում դնում է մտքի տկարությունը, մարդկային ճակատագրի անորոշությունը, ապագայի նկատմամբ սարսափը և այլն[16]: Նրա կարծիքով ռեալիզմը հաջորդեց ռոմանտիզմին, որովհետև մարդիկ հոգնեցին երևակայականից, անվերջ տրտունջներից ու հույզերի մեծ չափաբաժնից: Այդ իսկ պատճառով Բայրոնը, Հյուգոն, Շատոբրիանն ու Լամարթինը իրենց տեղը զիջեցին Բալզակին: Չոպանյանը սահմանում է ռոմանտիզմի և իրապաշտության գլխավոր տարբերությունը՝ երևակայություն և կյանք: Գրական դպրոցների մասին Չոպանյանն անձամբ էր զրուցել Էմիլ Զոլայի հետ՝ այցելելով նրա տուն 1894 թ. հունիսի 24-ին, որից հետո ծավալուն հոդվածով իր տպավորություններն էր արտահայտել «Հայրենիքի» էջերում[17]: Զոլան մտահոգություն է հայտնել, որ թատերգության ժանրում ռեալիզմը դեռևս չի կարողացել իր ազդեցությունը տարածել այնպես, ինչպես վեպի ժանրում: Ռեալիստ Զոլան հիացմունքով է արտահայտվել սիմվոլիստ Վեռլենի մասին[18]: Առհասարակ 90-ականների վերջին հայ քննադատները սիմվոլիզմի հայրերից ամենից շատ անդրադառնում էին Վեռլենի պոեզիային, ինչը վկայում է այն մասին, որ հատկապես արևմտահայ մամուլը ուշադրությամբ հետևում էր գրական հոսանքների ձևավորմանն ու ընթացքին:

XIX–XX դդ. սահմանագիծն էր նորարական մի շարք ուղղությունների, միաժամանակ սիմվոլիզմի տիրապետության շրջանն էր: «Արևելքում» տպագրվում է **Մ.Կ. Շահնազարի՝** ֆրանսիական սիմվոլիզմի

---

[13] Նույն տեղում, էջ 483:
[14] Նույն տեղում, էջ 483:
[15] Նույն տեղում, էջ 485:
[16] **Չոպանյան Ա.,** Գթություն, «Հայրենիք», 1894, փետրվարի 20, № 731, էջ 1:
[17] **Չոպանյան Ա.,** Տեսակցություն մը Էմիլ Զոլայի հետ, «Հայրենիք», 1894, հուլիսի 6, № 864, էջ 1:
[18] Նույն տեղում:

մասին հոդվածը, որում ստեղծում է Վեռլենի գրական դիմանկարը[19]: Վեռլենի և սիմվոլիզմի մասին նոր հոդվածների ազդակ դարձավ բանաստեղծի մահը, որի արձագանքները հայտնվեցին հայ պարբերական մամուլում («Արևելք», «Արևելյան մամուլ» և այլն)[20]: Վեռլենի պոեզիայի նկատմամբ հետաքրքրությունը պահպանվեց և հետագա տարիներին[21]: Մյուս կողմից՝ արդեն քննադատական խոսք էր հնչեցվում ռեալիզմի հասցեին: Մ. Մամուրյանի խմբագրած «Արևելյան մամուլի» էջերում տպագրվում է անծանոթ հեղինակի «Իրապաշտութեան ստութիւնը» հոդվածը: Հեղինակը վստահ է, որ նույնիսկ իրապաշտ հեղինակներն իրենց կենդանության օրոք համոզվեցին, որ «յաղթանակը ուրիշ դպրոցներու վրայ չի կարող տևական լինէլ»[22], քանի որ յուրաքանչյուր գրող նկարագրում է ոչ թե իրականությունը, այլ իր վերաբերմունքը իրականության նկատմամբ. «Ամէն վէպերը ... կեանք չեն, այլ միայն կեանքի անհատական ցոլացումները»[23]:

XIX դարավերջի գրական հոսանքների բազմազանության խճանկարում հայ քննադատները միակողմանիության մեղադրանք էին ներկայացնում բոլոր հոսանքներին: **Ապրսամը (Մ. Մամուրյան)** իր սլաքն ուղղում է սիմվոլիստների ու հատկապես Պոլ Վեռլենի դեմ: Սիմվոլիստներին («երազատես դպրոց») անվանում է մոգականներ, խորհրդապաշտներ, իսկ դեկադենտներին՝ անկապաշտներ[24]: Ժամանակակից լինելու հանգամանքը, Վեռլենի բարոյական նկարագրի մասին շրջանառվող ասեկոսեներին ու նրա կյանքին ծանոթ լինելը որոշակի դեր են խաղացել Մ. Մամուրյանի խիստ բացասական գնահատականի համար: Բանաստեղծին նա ներկայացնում է որպես կյանքում աննպա-

---

[19] **Շահնազար Մ.,** Ֆրանսիական նոր դպրոցը, Բոլ Վեռլեն (Գրական դիմանկար), «Արևելք», Կ. Պոլիս, 1894, 4 հունիսի, № 3096:

[20] Տե՛ս **Ապրսամ (Մամուրյան Մ.)** Վեռլենի մասին, «Արևելյան մամուլ», Զմիւռնիա, 1896, № 7: **Մամուրյան** Մեր դարավերջի երիտասարդները, «Արևելյան մամուլ», 1896, № 24, **Պռիսոն Ա.,** Ֆրանսիական գրականություն, «Արևելք», 1896, 25 հունվարի, № 3585, **Պառես Մ.,** Վեռլենի մահը, «Արևելք», 1896, 29 փետրվարի, 2 մարտի, № № 3603, 3604:

[21] **Սիպիլ,** Բոլ Վեռլեն, «Մասիս», 1898, № 1, դեկտ. 5:

[22] Անստորագիր, Իրապաշտության ստութիւնը, «Արևելյան մամուլ», 1896, № 7, էջ 211, 213, № 8: Ըստ ամենյանի, հեղինակը Մ. Մամուրյանն է՝ հանդեսի խմբագիրը:

[23] Նույն տեղում:

[24] **Ապրսամ (Մամուրյան Մ.)** Վեռլենի մասին, «Արևելյան մամուլ», կիսամսյա թերթ, 1896, № 7:

տակ, սևամաղձ ու շվայտ, մերթ իբրև քերթող, մերթ իբրև մուրացիկ ապրած թափառաշրջիկ «սկեպտիկութեան, թշուառութեան ու անառակութեան խառնուրդ մ' էր... Ոտանաւորները... գռեհիկ ու աղտոտ նիւթերու վրայ կ' դառնան... Վէռլէնն, այս ողորմելի, խելացնոր մարդու մը բեկորը»[25]: Սակայն Վեռլենի մասին Մամուրյանի կարծիքը արևմտահայ գրական շրջաններին բնորոշ չէր: Շատ ավելի տարածված էին բանաստեղծի ստեղծագործության հանդեպ հիացումն ու արժևորումը: Այդ է վկայում Սիպիլի (Զապէլ Յովհաննէսի Խանճեան) «Բոլ Վէռլէն» հոդվածը, որը բանաստեղծի մարդկային ու ստեղծագործական նկարագրի փորձ է: Սիպիլի գնահատմամբ «Վէռլէնի նոր գործը La Sagesse («Իմաստութիւնը») միստիքականութեան հրաշալիք մըն է, յուզումներու, ազատ ներշնչումի քնարերգութիւն է ամբողջապէս»[26]: Սիպիլը Վեռլենին հռչակեց «Իր երկրի ժամանակակից գրողներուն ամէնէն ինքնատիպը, ամէնէն խանդավառը, ամէնէն զարմանալին՝ իր անսուտ յուզումներովը, հզօր ներշնչումներովը»[27]:

1890-ական թթ. գրական հոսանքների քննական վերլուծությունները համեմատաբար քիչ էին արևելահայ պարբերական մամուլում: Միայն 1899 թ. գրական ուղղությունների վերլուծություններ հանդիպեցին Թիֆլիսի «Տարազ» և «Մուրճ» հանդեսներում[28]: Անանուն հեղինակը իր «Քննադատականում», հիմվելով դեկադենտներին քննադատող Մաքս Նորդաունի տեսության վրա, մեղադրում է դեկադենտներին՝ բառարաններից առնված արհեստական բառերի գործածության համար, պոեզիան ավելի անըմբռնելի դարձնելու և «ցնորամտութեան հասցնելու» համար: Բոդլերին առանձնացնում է որպես համեմատաբար հասկանալի, իսկ նրա հետևորդներին՝ Մորիս Մետերլինկին, Ստեփան Մալարմեին, Հենրի դը Ռեյնեին, Ժան Մորեասին՝ որպես ծայրահեղության հասած բանաստեղծներ, որոնք հռչակ են ձեռք բերում միայն խրթինության ու անհասկանալիության պատճառով[29]:

---

[25] Նույն տեղում, էջ 210:
[26] **Սիպիլ,** Բոլ Վեռլեն, «Մասիս», 1898, № 1, դեկտ. 5, էջ 19:
[27] Նույն տեղում, էջ 21:
[28] **Անանուն հեղինակ,** Քննադատական, «Տարազ», 1899, № 6, էջ 155–158: **Լիսիցյան Ս.**, Ռուսաց գրականության ուղղությունները 18-րդ դ. և 19-րդ դ. սկզբում, «Մուրճ», Թիֆլիս, 1899, № 4–5, էջ 458–678:
[29] **Անանուն հեղինակ**, Քննադատական, «Տարազ», Թիֆլիս, 1899, № 6, էջ 155:

XX դ. առաջին երկու տասնամյակներ

XX դարասկզբին մամուլում շարունակվում էին գրական դպրոցների մասին քննարկումները: «Գեղարվեստի» խմբագիր Գ. Լևոնյանը **«Իդեալիզմը, ռեալիզմը, սիմբոլիզմը գեղարվեստի մեջ»** հոդվածում առաջադրում է իր տեսությունը իրապաշտության և իդեալիզմի մասին: Արվեստաբանի ընկալումներում ռեալիզմը արտացոլում է կյանքը, որն անկատար է ու երերուն, իսկ իդեալիզմը «զօրեղ է ռեալիզմից և հավերժական է»[30], քանի որ նրա հիմքում ընկած է երևակայությունը: Իդեալիզմ ասելով՝ Լևոնյանը նկատի չուներ ռոմանտիզմն ու ռոմանտիկականը, այլ այն ամենը, ինչ ներկայացվում է երևակայության միջոցով, ինչը տեսանելի է «հոգու աչքերով»: Նա վստահ էր, որ առանց երևակայության անհնար է արտահայտել «գեղեցիկ իդէալներ», մինչդեռ «Ռէալիզմի թեւերը կապուած են, նա չէ կարող ազատ շարժումներ, ազատ թռիչքներ ունենալ ձեւի և նիւթի արտայայտութեան մէջ»[31]: Ահա թե ինչու կյանքի թելադրանքով կաշկանդված ռեալիզմը, ըստ Լևոնյանի, զիջում է իդեալիզմին: Նրա կարծիքով, տարբեր ուղղություններ, այդ թվում և ռեալիզմը մերժող սիմվոլիզմը ծնվում են իդեալիզմից: Գրական ուղղությունները դիտելով ծնող-զավակ հարաբերակցության մեջ՝ իբրև ռեալիզմի ու ռոմանտիզմի ծնունդ, Լևոնյանը գրում է. «Իդէալիզմի և թէ ռէալիզմի դպրոցները… պետք է ասել alma – mater-ն են եղել համարեա բոլոր միւս ուղղութիւններուն (կեղծ կլասիցիզմ, ռոմանտիզմ, նատուրալիզմ, իմպրէսիոնիզմ և թէ մի շարք այլ հոսանքներ)»[32]:

Մեթոդների ծագման խնդիրները մշտապես եղել են հայ քննադատների ուշադրության կենտրոնում: Այս հարցում նորույթ կար Ավ. Ահարոնյանի մոտեցման մեջ: Նա Զոլայի մահվան առիթով գրած «Էմիլ Զոլան և նատուրալիզմը» հոդվածում նոր մեթոդների ձևավորումը դիտարկում է որպես նախորդի հակազդեցություն: Ահարոնյանը գրում է. «Նատուրալիզմը պայմանաորող պատճառները պարզելու համար պետք է… ռոմանտիզմի ոգին բացատրել, որովհետև մէկը միւսի դէմ

---

[30] **Լևոնյան Գ.,** Իդեալիզմը, ռեալիզմը, սիմբոլիզմը գեղարվեստի մեջ, «Գեղարվեստ», Թիֆլիս, 1913, № 5, էջ 11:
[31] Նույն տեղում:
[32] **Լևոնյան Գ.,** Գեղարվեստի տեսականը, Էսթետիկական խնդիրներ. Իդեալիզմը, ռեալիզմը, սիմբոլիզմը գեղարվեստի մեջ, «Գեղարվեստ», 1913, № 5, էջ 10:

սկսուած ռեակցիան է, նրա հակահարուածն է»[33]: Միաժամանակ մեթոդի ձևավորումը արվեստում քննադատը կապեց գիտության, մասնավորապես հոգեբանների ու փիլիսոփաների ուսմունքների հետ: Ահարոնյանը նկատում է. «Շնորհիւ Տէնի մի ամբողջ յեղաշրջումն է կատարւում մտածողութեան եղանակի, նիւթեր ընտրելու մեթոդի և ... վերլուծութիւնից եզրակացութիւններ հանելու մէջ. Սէն-Սիմոն, Կլոդ-Բերնար, Տէն, Ֆրանսիայում պատրաստեցին մի սերունդ, որը կարծէք էլ տրամադիր չէր հափշտակուելու ռոմանտիկական յոյզերով. յաջորդող պերիոդը արդէն գիտական պօզիտիվիզմին է պատկանում. երազների տեղ բռնում է գործնական մատերիալիզմը, իսկ սկեպտիցիզմը մտքին տալիս է մի այլ, հիմնական, պահանջող, քննադատող ուղղութիւն: Այսպէս էր այն իշխող ոգին, որը հնարաւոր դարձրեց նատուրալիզմը»[34]: Քննադատի կարծիքով Զոլան հետևում է Տէնի անալիտիկ մեթոդին, ձգտում է ընդգրկել կյանքն իր լայն և բազմապիսի ամբողջությամբ. «Նրա նկարագրութիւնները միշտ ցաւոտ են, յաճախ էրոտիկ, մեծ մասամբ նողկանք պատճառող, բայց միշտ զօրեղ ցնցումներ պատճառող»[35]:

Եթե Ահարոնյանը հակված էր ավելի ընդգծելու մեթոդների տարբերությունը և «անհամերաշխությունը»՝ կապված տարբեր փիլիսոփայական ուղղությունների հետ, ապա գրական մեթոդների հարաբերակցության հարցում նույն շրջանում քիչ չէին դրանց «համերաշխության» գաղափարն արտահայտողները: «Արևելքի» էջերում **Արամազդ**[36] ծածկանունով հեղինակը «Վէպերու ընթերցումը» հոդվածում առաջարկում է միավորել ռոմանտիկական (գաղափարական) և ռեալիստական (իրապաշտական) ուղղությունները, քանի որ դրանք միակողմանի ազդեցություն ունեն վեպի բովանդակության ընկալման տեսանկյունից: Դրանցից մեկը՝ ռոմանտիզմը, ըստ հեղինակի՝ «կը պատմէ հոգիին կեանքը, մարդկային սրտի ամէնէն նուրբ զգացումները, հեշտանքները, ինչպէս նաև դառն ու խորին ցաւերը, յուսահատութիւնները և հոգեկան ալեկոծումները: Միւսը կը հետազօտէ նիւթական կեանքի խորքերը,

---

[33] **Ահարոնյան Ա.,** Էմիլ Զոլան և նատուրալիզմը, «Մուրճ», 1902, № 9, էջ 234–243, էջ 236: Շարունակությունը՝ № 10, էջ 203–212, № 11, էջ 194–203:
[34] **Ահարոնյան Ա.,** Էմիլ Զոլան և նատուրալիզմը, «Մուրճ», 1902, № 10, էջ 241:
[35] Նույն տեղում, № 10, էջ 211, № 13, էջ 146–147:
[36] Արամազդ ծածկանվան տակ հանդես է գալիս **Արամ Ստեփանի Ստեփանյանը (Փապուճյան)** (31.12.1887), Կ. Պոլիս (Միջագյուղ) – 04.04.1947, Երուսաղեմ): Տե՛ս **Հովակիմյան Բ.,** Հայոց ծածկանունների բառարան, Եր., ԵՊՀ հրատ., 2005, էջ 723:

մէջտեղ կը հանէ ու կը պարզէ մարդկային ախտերը, մարմնոյն ստորացուցիչ մոլորութիւնները»[37]: Քննադատը առաջարկում է **«համերաշխություն»** այդ երկու մեթոդների մեջ և նրանց միաձուլում: Գրական դպրոցների համերաշխության մասին հանդիպում ենք նաև «Լույս» հանդեսի էջերում ֆրանսիացի բանաստեղծ և էսսեիստ, «Պառնաս» խմբի անդամ անանուն հեղինակի՝ Սյուլի-Պրյուդոմի գրական դիմանկարում: Անանուն հոդվածագրի խոսքերով. «Սիւլլի Փրիւտօմ արդի ոչ մէկ որոշ դպրոցի կը պատկանէր, անոր ազնիւ փառասիրութիւնն էր հաշտեցնել այդ դպրոցները անոնցմէ դուրս քաշելով և իր մէջ միացնելով ինչ աղէկ բան որ կար անոնց իւրաքանչիւրին մէջ»[38]:

Գրական դպրոցների համերաշխության խնդրին անդրադարձել է նաև **Մերուժան Պարսամյանը** իր «Անիծված բանաստեղծները» հոդվածում, որտեղ, կիրառելով «սեռ» եզրույթը «մեթոդի» փոխարեն, գրում է. «Ինծի համար ամենէն տաղանդաւոր, ամենէն աւելի ապրուելու սահմանուած գրագէտը ա՛ն է, որ մասնաւոր գրական դպրոցի մը չհետեւիր: Կատարեալ գրագէտ մը պէտք է իր մէջ կրէ դասականներու ազնուական չափականութիւնը, վիպականներու զգայական քաղցրութիւնները, խորհրդապաշտներուն աղուոր գիւտերը, իրապաշտներուն հզօր ազգութիւնը.... Այդ սեռերուն առաւելութիւններուն խառնուրդով սքանչելի գրականութիւն մը կը կազմուի, որովհետև պէտք է ընդունիլ, թէ գրական սեռերուն ոչ մեկը կրնայ անթերի նկատուիլ»[39]: Այնուամենայնիվ, Մ.Ա. Պարսամյանը հանդես է գալիս ռեալիզմի պաշտպանության դիրքերից՝ գրելով. «Բանաստեղծութեան մէջ աղուորին ճշգրիտ արտայայտութիւնը կը գնահատեմ, ինչպէս վիպասանութեան մէջ մի՛շտ ու միա՛յն իրապաշտութիւնը»[40]: Նույն հեղինակի մեկ այլ՝ «Գրականութեան գիշերը» արտահայտում է դժգոհություն ժամանակակից մոդեռն գրական ուղղություններից: Իբրև օրինակ հիշատակվում է Արտաշես Հարութ-

---

[37] **Արամազդ,** Վեպերու ընթերցումը ռոմանտիկ և իրապաշտական ուղղություններ), «Արևելք», 1902, մարտ 21-ապիլի 3, № 4900, էջ 1:

[38] **Անանուն հեղինակ,** Սյուլլի Փրիւտօմ, «Լոյս» ամսյա գիտական, գրական և բարոյական հանդես (Քեմբրիջ 1901–1907, Բոստոն 1907–1908), 1907, Բոստոն, № 1, նոյեմբեր, էջ 31–32:

[39] **Պարսամյան Մ.,** «Անիծված բանաստեղծները», «Շանթ» գրական և գեղարվեստական կիսամսյա հանդես, Կ. Պոլիս, 1911, 1/14 դեկտեմբերի, № 12, էջ 181–189:

[40] **Պարսամյան Մ.,** Գաղափարներ ու զգայություններ, «Արևելք»,1902, 6/19 սեպտեմբերի, № 5044, էջ 1:

յունյանի պոեզիան[41]: Նույն համատեքստում էլ ստեղծում է Բոդլերի գրական նկարագիրը՝ շեշտադրելով նրա հուսահատությունն ու ողբերգական սերը[42]:

Որքան էլ իրապաշտության կողմնակիցները շատ էին, այնուամենայնիվ, մոդեռնիստական ուղղությունները նույնպես իրենց պաշտպաններն ունեին՝ հանձինս ոչ միայն այդ ուղղություններով ստեղծագործողների՝ Կարա Դարվիշի (Հակոբ Գենջյանի) և այլոց, այլև քննադատների:

Մ. Շամտանճյանը «Մորիս Մետերլինկ» («Մոռիս Մէդէռլիք») հոդվածում՝ հրատարակված Պոլսի «Ծաղիկ» շաբաթերթում, բացի համաշխարհային գրականության մեջ բելգիացի ֆրանսալեզու բանաստեղծ, դրամատուրգի ստեղծագործության արժևորումից, անդրադառնում է իրապաշտության և մոդեռնիստական ուղղությունների հակադրության խնդրին: Հայ քննադատի տեսադաշտում Մետերլինկը հայտնվում է նրա «Խոնարհների գանձերը» (1896) և «Իմաստություն և ճակատագիր» (1898) փիլիսոփայական երկերի տպագրությունից հետո: Քննադատի համար հենց այդ երկերն էին Մետերլինկին հասկանալու բանալին: Նրա խոսքերով «Եթէ կ'ուզենք ըմբռնել, թէ ի՞նչ է Մոռիս Մէդէլինքի արուեստը, պէտք է որ ... ձեռք առնենք մանաւանդ իր երկու գործերը Tresor des Humbles եւ La Sagesse et Ia Destinee եւ պատկառոտ ուշադրութեամբը հետեւինք անոր գաղափարներուն»[43]: Շամտանճյանի կարծիքով իրապաշտները չեն կարողանում ճշմարտությունը ձուլել գեղեցիկին, դրա համար էլ տեղը զիջում են ռեալիստներին և այլ ուղղությունների: Քննադատը մեկնում է խորհրդանիշները՝ բացահայտելով Մետերլինկի հատկապես «Արդարության խորհուրդը» (1900) և «Մեղուների կյանքը» (1901) փիլիսոփայական երկերի տարբեր շերտերը: Նա վերլուծում է նաև Մետերլինկի՝ երջանկության («Իմաստուն ըլլալ կը նշանակէ ամէն բանէ առաջ սորվիլ երջանիկ ըլլալ»)[44], արդարության և ճշմարտության, մարդկային հոգու մասին մոտեցումները: Շամտանճյա-

---

[41] **Պարսամյան Մ.,** Գրականության գիշերը, «Արևելք», 1902, 17 մարտի, № 4885:
[42] **Պարսամյան Մ.,** Գրական դեմքեր. Պոտլեռ, «Արևելք», 1902, մարտ 19 – ապրիլի 1, № 4898, էջ 1:
[43] **Շամտանճյան Մ.,** Մոռիս Մեդեռլինգ, «Ծաղիկ» հանդես, Կ. Պոլիս, 1903, № 12 (555), 19 ապրիլի, էջ 133:
[44] Նույն տեղում, էջ 146:

նը համամիտ է Մետելինկին, որ «Երջանկութիւնը բնական շարունակությունն է իմաստութեան, և այն կյանքի նպատակ է, որ արդարամտութիւնն սկզբունքն է մարդկային գործունէութեան և ... բոլոր բարոյական հարստությունների աղբյուրը մարդկային հոգին է»[45]: Թեև հոդվածում կոնկրետ սիմվոլիզմի վերլուծություն չենք տեսնում-, սակայն քննադատը հակադրվում է տարածված այն տեսակետին, թե սիմվոլիստական թատերգությունները «բեմին վրայ ներկայանալի չեն...»[46]: Նրա կարծիքով Մետելինկը այն առաջին սիմվոլիստ դրամատուրգն է, որ կարողացավ ոչ թե նյութի, այլ հոգու հետ կապված գործողությունը բեմ հանել. «Նիւթին կապուած գործողութիւն մը սահմանափակ ըլլալու դատապարտուած է իր նիւթին պէս, մինչդեռ մեր հոգւոյն կեանքը հարուստ է մեծ եւ ընդհանուր պատահարներով»[47]: Շամտանճյանը Մետերլինկին հռչակում է սիմվոլիստական թատերգության հայր, «ներքին, հոգեկան թատրոնի մը ստեղծող»: Հայ քննադատի գնահատականները համահունչ են ժամանակակից քննադատներ Օկտավ Միրբոնի, Անդրե Ժիդի խոսքերին:

Մետերլինիկի գրական դիմանկարը ստեղծվեց նաև «Շանթ» կիսամսյա պարբերականի էջերում: Հեղինակը **Ա.Յ. Պառավյանն էր**, որն արվեստագետի մասին իր խոհերը շարադրել է բանաստեղծի 50-ամյա հոբելյանի կապակցությամբ: Իր ժամանակի համար բավական խոր վերլուծությամբ քննադատը ներկայացնում է գրողի ողջ ստեղծագործությունը՝ հիշեցնելով, որ Մետերլինկը իր «Իշխանուհի Մալենը» (1889) թատերգությունից հետո հռչակվել է Բելգիայի Շեքսպիրը: Կիսամսյա հանդեսը ներկայացնում է նաև Մետերլինկի ասույթները ճակատագրի, երջանկության, գեղեցկության և այլնի մասին[48]:

Հայ քննադատները հատուկ ուշադրություն էին դարձնում փիլիսոփայական թեմաներով գեղարվեստական երկերին, մասնավորապես պառնասական դպրոցի հեղինակներին: Դեռևս 1878-ին տպագրվել էր պառնասական Սյուլի Պրյուդոմի «Արդարացիություն», իսկ 1888-ին՝ «Երջանկություն» ծավալուն պոեմները: **Յ. Բաղդասարյանը** «Գրական

---

[45] Նույն տեղում:
[46] Նույն տեղում, էջ 147:
[47] Նույն տեղում:
[48] **Պառավյան Մ.,** Մորիս Մեթերլինկ, «Շանթ», 1912, 1/14 նոյեմբերի, № 32, էջ 118–120:

հոսանքներ» հոդվածում[49] փորձում է բացահայտել սիմվոլիզմի և Կանտի, Նիցշեի ու Շոպենհաուերի փիլիսոփայության մեջ եղած աղերսները, որոնք վերաբերում էին բնազդի և ինտուիցիայի դերին: Բաղդասարյանը գրում է. «Բանաստեղծը, արվեստագետը ամենից առաջ ... ոգևորութեան ու էկստազի ժամերին պիտի ջանա ինտուիտիվ ճանապարհով նշմարել աշխարհի ու կեանքի էութիւնը և երկնել... Արուեստի կոչումն է – ըմբռնել աշխարհը, երեւոյթները, իրերը մի այլ - ոչ բանական ճանապարհով: Ահա սիմվոլիզմի այն հիմնական գաղափարը, որ ... նրա մէջ պարունակւող առողջ սաղմն է... Այս իմաստով սիմվոլիզմը եղել է և պիտի մնայ ընդմիշտ, իբրև ուղեցոյց աստղ բոլոր արուեստագէտների համար, քանի գոյութիւն կունենայ իսկական արուեստ»[50]:

Արվեստագետի ներըմբռնողականության խնդրին անդրադառնում է նաև Դ. Վարուժանի «Հեթանոս երգերի» գրախոսը՝ **Ս.Հ. Գալիոնճյանը**՝ քննադատելով բնազդ-բանականություն հակադրությունը: Նա «Բնազդի աստվածացումը» հոդվածում[51] գրում է. «Եւրոպայի արդի խորհողներուն մօտ որոշ ձգտում մը կը նշմարուի՝ փառաբանելու բնազդը ... և վարկաբեկելու բանականութիւնը: Անռի Պէրկսօն՝ իմաստասիրութեան պատմութեան մէջ դարագլուխ բացող իր Creative Evolution այնքան ինքնատիպ ու մտածուած երկով, բնազդը կը բարձրացնէ մինչև հստակատէսութիւն (intuition): Գիտութեան մէջ Neo-vitalist- ները Գեղարուեստի մէջ Neo-impressionist-ները, Քիւպիսթները ու Ապագայապաշտները, Քանդակագործութեան մեծագոյն վարպետներէն Ռոտէն իր արձաններով, արդի Ֆրանսիայի գրական վարպետներէն Փ. Լոթի, Վէրլէն, Փոլ-Ֆոռ՝ իրենց վէպերով ու քերթուածներով, և Մորիս Մէթէռլինք՝ Պելճիգայի մեծագոյն գրագէտը՝ իր խորհրդապաշտ գործերով կը ձգտին արտայայտել և փառաբանել ինչ-որ ենթագիտակցական, անորոշ ու բնազդական է մարդու մէջ»[52]:

Սիմվոլիզմը և բնազդի դերն արվեստում քննադատողների թվում էր **Կ. Սահակյանը**: Նրա «Խորհրդապաշտ դպրոցը հայ գրականու-

---

[49] **Բաղդասարյան Է.,** Ռուս գրական աշխարհից, Գրական հոսանքներ, «Հորիզոն», Թիֆլիս, 1912, հուլիսի 24, № 158–159:
[50] Նույն տեղում:
[51] **Գալիոնճյան Ս.,** Բնազդի աստվածացումը. Վարուժանի «Հեթանոս երգեր»..., «Հայ գրականություն» ամսագիր, Զմյուռնիա, 1913, Բ տարի1/14 մայիսի, № 9, էջ 21–24:
[52] Նույն տեղում, էջ 21:

թեան մէջ» հոդվածը տպագրվում է 1905 թ. «Բազմավէպի» էջերում: Սահակյանը սիմվոլիստական դպրոցը հռչակում «Գեղեցկագիտական գրութեանց մէջ՝ ամէնէն նուազ արժէքն ունեցողը»[53], և ազդարարում է նրա անխուսափելի վախճանը. «Այսպիսի ուղղութիւններ դատապարտուած են բարեբաղդաբար, ծաղկահասակ մեռնել»[54]: Սիմվոլիստների գոյությունը արդարացնում է միայն օտար գրականությունների համար. «Անկապաշտ դպրոցը օտարներուն քով իր գոյութեան իրաւունքներն ունի այն պատճառաւ, որ դրպրոցներու զանազանութիւնը միշտ բարերար արդիւնք մը ունի մեծ ազգի մը գրականութեան համար... տարբեր շաւիղներու հետեւելով, ամբողջութեան կը ընծայեն կատարելութիւն մը, զանազանութիւն մը»[55]: Նա չի ընդունում սիվոլիզմի հայ հետևորդներին նաև նրանց արվեստում հայրենիքի, ազգային ինքնատիպության բացակայության պատճառով: Ոմանք էլ մոդեռնիստներին անվանեցին «յառաջադիմութեան անիուի առաջ քար գցողներ»[56]: Հ. Բաղդասարյանը սիմվոլիստների անհաջողությունը բացատրում է նրանց՝ կյանքից հեռու գտնվելու հանգամանքով. «Սիմուոլիզմը, ունենալով իր մէջ մի քանի առողջ սաղմեր և տեսական խելացի պահանջներ, չդիմեց կեանքին... այլ ընդհակառակը, դիմեց ... մտացածին ու անկենդան սիմուոլների օգնութեանը»[57]:

1914 թ. փետրվարի 14-ին Տիգրան Նազարյանի սալոնում հայկական ֆուտուրիզմի մասին դասախոսություն է կարդում Հ.Գենջյանը: Ըստ գրական երեկոյի մասին ֆելիետոնի հեղինակի՝ նրա խոսքի բովանդակությունը հետևյալն էր. «Հայ գրականութիւնը դառել է կանաչ ճահիճ, որի մէջ կարմիր ու կապոյտ գորտերը կռկռում են, և ով ընկնի նրա մէջ, կըխրուի մինչև քիթը, և որպէս օրինակ, բերեց եպիսկոպոս Սայաթ-Նովային և Հայ Գրական ընկերութիւնը. ... ֆուտուրիզմը. դա

---

[53] **Տեր Սահակյան Կ.**, Խորհրդապաշտ դպրոցը հայ գրականության մեջ (Սիմվոլիզմի գրական ուղղության քննություն), «Բազմավէպ», Վենետիկ, 1905, № 11, էջ 481–487:
[54] Նույն տեղում:
[55] Նույն տեղում, էջ 485:
[56] Անհայտ հեղինակ, Գրականական շրջաններում, «Մարտ» երկշաբաթյաթերթ, Մոսկվա, (1911–1916), 1-ը մարտի 1913, № 3, էջ 7–8:
[57] **Բաղդասարյան Հ.,** Գծեր ռուս գրականությունից, (Թերթոն), «Հորիզոն», 1914, 20 փետրվարի, № 37, էջ 2:

մարդկութեան ճիչն է, որ ուզում է դուրս գալ այդ ճահճից»[58]: Հենց դասախոսության ընթացքում բանախոսը ստացավ հակադարձումներ. Ա. Աթանասյանը (Սալ-Ման)[59] ֆուտուրիստներին անվանեց «հոգեկան հիւանդներ»: Բ. Իշխանյանը՝ ֆուտուրիզմը բնորոշեց ռուսական քաղաքական ռեակցիայի «հիվանդոտ և զզվելի արտահայտություն», իսկ Ակունյանը՝ «կըրակ ու շանթ թափեց ֆուտուրիստների գլխին», Կորեակովը «չար կերպով ծաղրեց»[60]: Հեղինակի եզրակացությունը ամփոփվում է մեկ նախադասության մեջ, որով սկսվում է հոդվածը. «Ահա ինչ կընշանակի խելօք ծնուել, յիմար ապրել և ապուշի նման մեռնել»[61]: Գենջյանի դասախոսությունը հիմք է դառնում գրական մոդեռն հոսանքների մասին նոր քննարկումների: Հ. Բաղդասարյանը անդրադառնում է ոչ միայն ֆուտուրիզմին, այլև ակմեիզմին, սիմվոլիստներին և այլն: Նրա և այլ քննադատների կարծիքով այդ ուղղությունները կենսունակութիւնից զուրկ են: Բաղդասարյանի կարծիքով միակ դրականը այդ հոսանքներում միմյանց դեմ պայքարն էր: Քննադատը գոհունակությամբ է արձանագրում. «Ակմէիստները իրաւացի կերպով խիստ քննադատութեան են ենթարկում սիմուոլիստներին»[62]:

Եզրակացություններ

XIX դարավերջից մինչև XX դ. առաջին երկու տասնամյակները գրական դպրոցների հարցերն արծարծվել են հիմնականում արևմտահայ պարբերական մամուլում: Կլասիցիզմի ռեալիզմի, սենտիմենտալիզմի, սիմվոլիզմի և մոդեռնիստական այլ ուղղությունների մասին քննարկումներում ակտիվ մասնակցություն ունեցան Ա. Չոպանյանը, Ա. Արփիարյանը, Ս. Լիսիցյանը, Մ. Շամտանճյանը և այլք: Այդ շրջանում գեղագիտական ուշագրավ ուսումնասիրություններ ու հոդվածներ տեղ գտան նաև արևելահայ մամուլի էջերում, մասնավորապես Թիֆլիսում

---

[58] **Սալ-Ման** (Հայկական ֆուտուրիզմ. Հ. Գենջյանի այդ թեմայով դասախոսության առթիվ, «Կովկասի լրաբեր», Թիֆլիս, 1914, փետրվարի 16, թիվ 33, էջ 1–2:

[59] **Աթանասյան Աշոտ Նահապետի** – գրող խմբագիր – 15.02.1870 Երևան-26.12.1946 Կոստրոմա:

[60] **Սալ-Ման,** Հայկական ֆուտուրիզմ, «Կովկասի լրաբեր», 1914, փետրվարի 16, № 33, էջ 2:

[61] Նույն տեղում:

[62] **Բաղդասարյան Հ.,** Գծեր ռուս գրականությունից, (Թերթոն), «Հորիզոն», 1914, 20 փետրվարի, № 37, էջ 2:

հրատարակվող հանդեսներում և նույնիսկ օրաթերթերում: Գ. Լևոնյանը, Ա. Ահարոյանը, Ա. Աթանասյանը, Հ. Գենջյանը և այլք՝ արևելահայ պարբերական մամուլում, Մ.Ա. Պարսամյանը, Ս.Հ. Գալիոնճյանը, Ա.Ս. Ստեփանյանը, Ա.Յ. Պառավյանը և այլք՝ արևմտահայ մամուլի ազգային-գրական-հասարակական տարբեր օրգաններում: Նրանցից յուրաքանչյուրը, իր աշխարհայացքի, գեղարվեստի նպատակի մասին գիտական ու անհատական պատկերացումներից ելնելով, հիմնականում փորձել է գտնել գրական դպրոցների առաջացման գրապատմական ու փիլիսոփայական հիմքերը, մեկնել դրանք ժամանակի գեղագիտական մտքի ընձեռած հնարավորություններով:

Գրական տարբեր մեթոդների մասին հայ պարբերական մամուլում ծավալված քննարկումներում ու բանավեճերում նախընտրությունը տրվեց հատկապես ռեալիզմին: Սակայն երեք տասնամյակների ընթացքում հայ քննադատական միտքը, անկախ բազմաբնույթ վերլուծություններից, ընդհանուր առմամբ նախապատվություն չի տվել որևէ գրական ուղղության և հիմնականում պաշտպանել է մեթոդների «համերաշխության», նրանց տարբեր հատկանիշներ գեղարվեստական միևնույն երկում մեկտեղելու գաղափարը:

Հայ գրական կյանքը և տեսական միտքը գնում էր համաշխարհային գրական ընթացքին համահունչ՝ արձանագրելով գրական տարբեր դպրոցների հոգևոր, գեղագիտական ու ոճական ընկալումը մեզանում: Պարբերական մամուլում տպագրված հոդվածները փաստում են, որ հայ գրականագիտական միտքը համաշխարհային գրապատմական պրոցեսի անբաժան մասն էր:

XIX դարավերջից մինչև XX դ. առաջին երկու տասնամյակները հայ պարբերական մամուլում դրվեցին գրական մեթոդների և ուղղությունների, գեղարվեստական սկզբունքների ու միջոցների՝ պատմականորեն զարգացող համակարգի գիտական հիմքերը և հայ տեսական մտքի հիմնաքարերը, որոնց վրա իրենց մոտեցումները կառուցեց հաջորդ տասնամյակների հայ քննադատական միտքը:

СУСАННА ОВАНЕСЯН
Доктор филологических наук,
ведущий научный сотрудник
Института литературы НАН РА

ЛИТЕРАТУРНЫЕ НАПРАВЛЕНИЯ И ШКОЛЫ В АРМЯНСКОЙ ПЕРИОДИКЕ КОНЦА XIX – НАЧАЛА XX ВЕКА

Резюме

Цель данной статьи – впервые систематизировать и оценить междисциплинарные исследования и публикации в армянской периодической печати конца XIX и первых двух десятилетий XX века, посвященные анализу литературных школ. Исследования эти одновременно затрагивают различные отрасли литературоведения: историю литературы, теорию литературыи литературную критику.Для реализации этой цели ставятся следующие задачи: систематизировать статьи о литературных направлениях, опубликованные в западноармянских и восточноармянских периодических изданиях, таких как «Масис», «Айреник», «Гехарвест», «Оризон» и другие, выявить особенности и общие черты теоретических подходов их авторов – А. Чопаняна, А. Арпиаряна, Г. Левоняна, Е. Отяна и других писателей и критиков того времени. Новизна работы обусловлена тем, что, хотя в армянских периодических изданиях были определённые упоминания о литературных методах и направлениях, однако, за исключением реализма, обсуждения и споры того времени по вопросам литературных школ и методов до сих пор не стали предметом отдельного исследования. Исследование проведено с применением традиционных историко-сравнительных и культурно-исторических методов. В различных статьях о литературных направлениях, независимо от подходов к тому или иному методу, многие армянские критики, хотя и выделяли реализм как особенно значимый, в целом

не отдавали предпочтение какому-либо одному литературному направлению. Параллельно с критикой и отрицанием некоторых модернистских направлений, были выдвинуты взгляды на необходимость синтеза всех методов. Предпринимались попытки выявить литературно-исторические и философские основания возникновения литературных школ. С 1890-х до 1920-х годов статьи армянских критиков, особенно А. Чопаняна, А. Арпиаряна и Г. Левоняна, опубликованные в периодике, заложили основы исторически развивающейся системы художественных принципов и методов, а также способствовали развитию современного армянского теоретического мышления.

Ключевые слова: *литературные направления и школы, реализм, романтизм, идеализм, армянская периодика, Аршак Чопанян, Гарегин Левонян.*

SUSANNA HOVHANNISYAN

Doctor of philological sciencesoct. Leading researcher of the Institute of Literature of the NAS of the Republic of Armenia

LITERARY MOVEMENTS AND SCHOOLS IN ARMENIAN PERIODICALS OF THE LATE 19TH – EARLY 20TH CENTURY

Abstract

The purpose of this article is to systematize and evaluate, for the first time, interdisciplinary research and publications in the Armenian periodical press of the late 19th and the first two decades of the 20th century, dedicated to the analysis of literary schools. These studies simultaneously address various branches of literary studies: the history of literature, literary theory, and literary criticism. To achieve this goal, the following tasks are set: to systematize articles on literary movements published in Western Armenian and Eastern Armenian periodicals, such as “Masis,” “Hairenik,” “Gegharvest,” “Horizon,” and others, and to identify the features and common traits of the theoretical approaches of their authors – A. Chopanyan, A. Arpiaryan, G. Levonyan, Y. Otyan,

and other writers and critics of that time.The novelty of this work lies in the fact that, although there were certain mentions of literary methods and movements in Armenian periodicals, discussions and debates of that time regarding literary schools and methods, with the exception of realism, have not yet become the subject of separate research. The study was conducted using traditional historical-comparative and cultural-historical methods. In various articles on literary movements, regardless of approaches to one method or another, many Armenian critics, while highlighting realism as particularly significant, generally did not favor any one literary movement. Alongside the criticism and rejection of certain modernist movements, views were also put forward on the need for a synthesis of all methods. Attempts were made to identify the literary-historical and philosophical foundations for the emergence of literary schools. From the 1890s to the 1920s, the articles of Armenian critics, particularly A. Chopanyan, A. Arpiaryan, and G. Levonyan, published in periodicals, laid the foundations for a historically developing system of artistic principles and methods and contributed to the development of modern Armenian theoretical thought.

Keywords: *literary movements and schools, romanticism, idealism, realism, Armenian periodicals, Arshak Chopanyan, Garegin Levonyan.*